



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:


Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՐԻԱՐԲԱՐԱՆԻ

ԱՄԵՅԱԿՐՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՑ



ԲԱՅՈՒՄ 1870 ԱՄԻՆ

ՆԻՍՏ ՔԱՌԱՍՈՒՆ ԵՒ ԵՕԹԵՐՈՐԴ

14 ՅՈՒԼԻՍ 1872



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Օ. ԽՕՃԱՍԱՐԵԱՆ
= 1872 =

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

ԲԱՅՈՒՄ 1870 ԱՄԻՆ

ՆԻՍՏ ԽԷ .

30 ՅՈՒՆԻՍ 1872

ՆԱԽԱԳԱՀ . — ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐԻ

ԱՏԵՆԱՊԵՏ . — ԱՂԱՅԼԿԵԱՆ Ս . ԷՖ . (Բ . Ատենապետ)

ԿԱՐԳ ԽՆԴՐՈՑ

- 1 . Վաւերացում նորնախը Երեսփոխանաց
- 2 . Քուէարկութիւն ընտրութեան Ազգ . Վարչութեան Քաղ . Ժողովոյ
- 3 . Ընտրութիւն նորոգ զիւանի Ընդհ . Ժողովոյ
- 4 . Կոնդակ Վեհ . Կաթողիկոսի
- 5 . Ատենական կանոնադրութիւն
- 6 . Կաթողիկոսական և Պատրիարքական յարաբերութիւնք
- 7 . Հարցում ինն Երեսփոխանաց

Ատենապետը բացառեցաւ ժամը 7 մէկ քառորդ անցած 'ի ներկայութեան 53 երեսփոխանաց մեծամասնութեան ժողովոյ , և 'ի վերջէ աւրոզը երեսփոխանաց թիւը 63 'ի հասաւ :

Ատենապետը Մէրեւ-Վուլի Է.Ֆ. սահմանական գործոց սխառնաւ բացակայ գտնուելու հարկադրեալ լինելն կանխաւ ծանուցած ըլլալուն համար , Ա . Նախաշահին հրաւիրանք՝ առժ . Ատենապետը կարգեցաւ Կրճիկեան Յ . Էֆէնտին :

ՎԱԽԵՐԱՑՈՒՄ ՆՈՐԸՆՏԻՐ ԵՐԵՍՓՈՒՅՆԱՑ

Ատենապետ Է.Ֆ. Ժողովոյն ներկայացուց Գործադիր Բանձնաժողովոյ կողմէ մատուցուած քանի մի նոր երեսփոխանաց ընտրութեան վերաբերեալ տեղեկագիրը :

Նոյն տեղեկագիրը կարդացուեցաւ , որոյ պատճէնն ահաւաստիկ .

Ամենապատիւ Սրբապան Հայր , Նախադահ Ազգ . Ընդհ . Ժողովոյ ,

Տիղրանալիքտի վիճակէն երեսփոխան ընտրուած է

Թէրթան Է.Ֆ. Թէրթանեան ,

Պաղտատի վիճակէն երեսփոխան ընտրուած է

Մ . Քերրէ Է.Ֆ. Պ . Աղէքսանդրեանց ,

Բերայի երեսփոխաններէն Միրասեղ տեան Մկրտիչ Է.Ֆ. վախճանած լինելով , անոր տեղ նորոգ ընտրութիւնը 'ի 28 յունիսի կատարուելով , 200 'ի մօտ ընտրողներէն 34 ին մաս .

նակցութեամբը և ըսելից բացարձակ առաւելութեամբը երեւոյթիւն ընտրուած է

Ստեփան էֆ. Խոզիրեան ըսէ 52 :

Սոյն ընտրութիւններն բոլորից կատարուած ըլլալով, կը ժողովանք պատկառելի ժողովոյն ներկայացնել ի ժողովարացումն :

30 Յունիս 1872 Ղարաթիւս :

ԳՈՐԾ. ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎՈՅ

ՎԱՍՆ ԱՏԵՆԱՊԳՐԻ ԱՏԵՆԱՊԵՏ

Ք. ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ս Պ Պ ՓԱՓԱԶԵԱՆ

Ատենապետ էֆ հրատարակեց երեւոյթիւնները, որ կարգացուած տեղեկագրոյն վրայ գիտողութիւն եթէ ունին՝ ընեն :

ԱՅՎԱՏԵԱՆ ՄԱՍՔԷՆՈՎ ԷՖ. — Թէ՛ ընտրուածներուն և թէ՛ դեռ ընտրուելիք երեւոյթիւնաց համար ընդհանուր գիտողութիւն ունին. ինչո՞ւ համար 103 երեւոյթիւն միայն ընտրուած և 57 պակաս մնացած են, որով երեւոյթիւնաց 140 թիւն ամբողջապէս չէ ընտրուած :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Չեր գիտողութիւնն ապագայ ընտրուելիք երեւոյթիւնաց մասին չը կրնար ընդունուել :

ՄԱՄԻԿՈՆԵԱՆ Մ. ԵՒ ՊԵԿԵԱՆ Թ. ԷՖ. — Տեղեկագրոյն մէջ Տիգրանակերտի նորընտիր երեւոյթիւնին համար թէրթիւն էֆ. Թէրթիւնեան գրուած է. սոյդ անունով մարդ չը կայ, թերևս Թաղէաս էֆ. Թէրթիւնեան ընտրու է :

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — (Ատենապետ Գործ. Յանձնաժողովոյ) Տիգրանակերտէն եկած տեղեկագրոյն մէջ Թէրթիւն Թէրթիւնեան գրուած է, որն որ Ալբրից գործակատար ըլլալով՝ Գործ. Յանձնաժողովը Պատրիարքարանէն հարցուցած և ստուգած է նորա Օսմանեան հարատակ ըլլալը :

Քրիզ գիտողութիւն չըլլալով, Ատենապետ էֆ. ըսելի գրաւ Գործ. Յանձնաժողովոյ տեղեկագրից, և ժողովն ընդհանուր հաւանութեամբ ընդունելով, վերոյիշեալ երեք երեւոյթիւնաց ընտրութիւնը վաւերացուց :

Ատենապետ էֆ. ծանոց որ բանի մի երեւոյթիւնաց կողմէ իրենց բացակայութեան պատճառը ծանուցանող նամակներ եկած են գիւանին, և անոնց անունը թուեց, որը են :

Ճարտարապետ Սենեքերիմ էֆ. — Ղանուպորթոյութեան պատճառաւ բացակայ :

Տամատեան Միրոն էֆ. — Հիւանդութեան պատճառաւ բացակայ :

Սարգսեան Ալիբեան էֆ. — Հիւանդութեան պատճառաւ բացակայ :

ՔԱԻԷԱՐԿՈՒԹԻՒՆ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ

ՔԱՂ. ԺՈՂՈՎՈՅ

Ատենապետ էֆ նախորդ նիստին որոշման համեմատ՝ Քաղ. Ժողովոյ 14 անդամոց ընտրութեան համար եռապարտիկ թուով 42 հոգւոյ ընտրելաց ցանկ մը պատրաստելու պաշտօնով, գիւանին կողմէ 7 հոգիէ խառն մասնաժողով մը կազմուած՝ և յիշուի ցանկը պատրաստուած ըլլալը յայտնելով, նոյն ցանկին տակաւ օրինակներն՝ որ մասնաժողովոյն կողմէ գիւանին հաղորդուած էին, անմիջապէս երեւոյթիւնաց ցրուել կուտայ, և կը հրատարակէ զերեւոյթիւններն որ ըսելարկութեան ձեռնարկեն :

Յիշեալ ցանկն ահաւատիկ :

ՅԱՆԿ

ԸՆՏՐԵԱԼԵԱՅ ՅԱՆԳԱՄԱԿՅՈՒԹԻՒՆ

ԱԶԳ. ԲԱՂ. ԺՈՂՈՎՈՅ

- | | |
|---------------|-----------------|
| 1. Արիկ | էֆ. Ունձեան |
| 2. Արցուն | • Խօջատանձեան |
| 3. Անդրանիկ | պէյ. Կրճիկեան |
| 4. Ասլո | էֆ. |
| 5. Բարսեղ | • Հարձեան |
| 6. Գէորգ | • Խաթիւնարձեան |
| 7. Գէորգ | • Փափաղեան |
| 8. Գէորգ | • Մուրատեան |
| 9. Գէորգ | • Միրոնիսեան |
| 10. Գրիգոր | • Ներսէսեան |
| 11. Գրիգոր | • Քարակէօղեան |
| 12. Ղազար | • Հովուեան |
| 13. Միհրան | • Սէթեան |
| 14. Միքայէլ | • Յակոբեան |
| 15. Միքայէլ | • Մովսէսեան |
| 16. Յակոբ | • Խանաւանձեան |
| 17. Յակոբ | • Գաղաղեան |
| 18. Յակոբ | • Արշակ |
| 19. Յարութիւն | • Տատեան |
| 20. Յարութիւն | • Մէրեշիմ-Գուլի |
| 21. Յարութիւն | • Սարուխանեան |
| 22. Յովհաննէս | • Կիւմիսեան |
| 23. Յովհաննէս | • Աղայէկեան |

- | | |
|-----------------|-------------------|
| 24. Յովհաննէս | էֆ. Պոյաճեան |
| 25. Յովհաննէս | • Կրճիկեան |
| 26. Յովհաննէս | • Յակոբեան |
| 27. Յովհաննէս | • Աղանաբեան Ճարտ. |
| 28. Յովհաննէս | • Կոնստանտին |
| 29. Պետրոս | • Փափաղեան |
| 30. Ռաֆայէլեան | • Տօթիկեան |
| 31. Թուրէն | • Կիւմիսեան |
| 32. Ռուսինեան | • |
| 33. Սահակ | • Փէլարմաղեան |
| 34. Սարգիս | • Աղարէկեան |
| 35. Մ. Սերգեյ | • Կիւրղէնիկեան |
| 36. Սենեքերիմ | • Մանուկեան |
| 37. Սեպուհ | • Մարտաշեան |
| 38. Ստեփան | իւրա |
| 39. Ստեփան | էֆ. Փափաղեան |
| 40. Տիգրան | • Երեսուցեան |
| 41. Քրիստոստուր | • Ղազարուեան |
| 42. Օսեան | • |

ՂԱԻՍԵՂ ՎԱՐԳ. ՓԻՐՂԱՆԷՄԵԱՆ. —

Ընտրելաց ցանկը պատրաստող մասնաժողովոյ Մեծ. անդամը չեն կրցած իրենց անունները նոյն պաշտօնական ցանկին մէջ անցնել. ուստի կառավարիկեմ որ անոնց անուններն ալ ընտրելաց ցանկին մէջ յաւելցուին :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Կը ցաւիմ որ Արժ. Ղանուպորթոյութեան ուշադրութիւն չէ ըրած թէ ընտրելաց ցանկը բաց է, և ուշադր կըրնայ նոյն ցանկէն դուրս անմիջապէս ընտրել. ուստի բոլորովին աւելորդ է այդ առաջարկութիւնը :

ՊԵԿԵԱՆ Թ. ԷՖ. — Սահմանադրութեան մէջ յօդուածը՝ Քաղ. Ժողովոյ անդամոց համար անմիջապէս վերընտրելի չըլլալը կը արամաղէ. ներկայ ընտրելաց ցանկին մէջ հրատարակու Քաղ. Ժողովոյ անդամոց անուններն ալ կան. մասնաժողովն երկու պատճառաւ կրնայ անոնց անունները ցանկին մէջ գրած ըլլալ. կամ այն է որ վերընտրելութեան արգելքն ինքնին ընդհանրապէս համարած է, և կամ նախորդ Քաղ. Ժողովը Սահմանադրութեան ընտրուած չը համարելով, և իրր անձամանակաց ժողով մը դրոյն նկատելով՝ անոր անդամոց անուններն անցուցած է ընտրելաց ցանկին մէջ. Այս մասին մասնաժողովը թող բարեհաճի. բացատրութիւն տալ. որպէս զի օրին մէկը չըսուի թէ վերընտրելութեան ար-

գելը ընտրուած է և այս առթիւ նոր շրջութիւնութեանց տեղի չը տրուի :

ԻԹԻԿՆԵԱՆ Կ. ԷՖ. (յանուն մասնաժողովոյ) — Պէկեան էֆ 2 պատճառ ցուցուց նախորդ Քաղ. Ժողովոյ անդամոց անուններն ընտրելաց ցանկին մէջ անցնելու մասին, և ըստ թէ կամ այն է որ մասնաժողովը վերընտրելութեան արգելքը ընդհանրապէս համարած է, և կամ իրր անձամանակաց ժողով մը ներկատեղի անցուցած է անոնց անուններն ընտրելաց ցանկին մէջ. Այս երկու պատճառներէն առաջինը բնաւ հիմ չունի և երկրորդը միայն ստոյգ է. արդարեւ մասնաժողովը նկատելով որ նախորդ Քաղ. Ժողովը Սահմանադրութեան արամադրութեանց համեմատ կառուուած չէր, այլ ուղղակի Ա. Պատրիարքին կողմէ ընտրուելով՝ միայն վաւերացումն ընդունած էր ընդհ. Ժողովն, ուստի ինչպէս որ անիչ առաջ ալ անձամանակաց խառն ժողովներ կային, որոնց ընտրութիւնը վերջնական չը համարուելով՝ նորէն օրինաւոր ժողովներու անդամ կընտրուէին, ճիշդ այս առաւելութեամբ մասնաժողովը նախորդ Քաղ. Ժողովոյ անդամները վերընտրելի ճանաչեր՝ և անոնց անուններն անցուցեր է ընտրելաց ցանկին մէջ :

Պէկեան էֆ. յայտնեց թէ այս բացատրութիւնն իրեն համար գոհացուցիչ էր :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Այնպիսի անձ մը կայ որ մասնաժողովոյ անդամ լինելու համար ընտրելաց ցանկէն դուրս մնացած է, սոյդ անձն է Քարակէօղեան Կարապետ էֆ. որ սաղանդաւոր և Քաղ. Ժողովոյ պաշտօնին արժանաւորութիւն ու յատկութիւն ունեցող մէկն է. ուստի ժողովոյն ուշադրութիւնը կը հրատարակու այս մասին :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Քրիստոստուր էֆին տի սոյս առաջարկութիւնն ալ գրեթէ մ. և նոյն է Ղանուպորթոյութեան առաջարկութեան հետ. ուստի հարկ չիկայ կրկնել այն բացատրութիւնը՝ որ սոյն մը առաջ յիշեալ վարդապետի առաջարկութեան ստիժա տուած եմ :

ԵՐԵՄՅԱ ԵՊԻՍԿՈՊՈՍ — Սահմանադրութիւնն ոչ միայն Քաղ. Ժողովոյ, այլ և կրօնական Ժողովոյ անդամոց համար ալ անմիջապէս վերընտրելութեան իրաւունք չունենալը կը արամադրէ. վերջին անգամ ընտրուած կրօն-

Ժողովոյ մէջ իւր նախորդին անդամներէն ալ կան, ևս կը զարմանամ որ անոր ընտրութեան վաւերացման ատեն ընդէ ժողովոյ մէջ զիտողութիւն ընող չէրաւ, մինչդէռ այժմ քաղ. ժողովոյ համար զիտողութիւն կըլլայ:

ԱՍԵՆԱՊԵՏ ԷՖ. — Այդ զիտողութիւնը՝ զոր Պէկեան էֆ. ՚ի սկզբան յարոյց, ոչ այլ ինչ նպատակաւ էր, բայց եթէ ազգային զգուշութեան համար, ուստի այս սպարազայն նըշանակուելէ ետեւ, ալ խնդիրը գոցուած է և նորէն խնդիր ընելու հարկ չէ մնացած:

Ա.Ղ.Ա.ԲԷ.ԿԵԱՆ Մ. ԷՖ. — Սահմանադրութեան մէջ կրօն. և քաղ. ժողովոյ անմիջական վերընտրելութեան արգելքը բացայայտ նշանակուած է, բայց անհնէին ասած չէ թէ ինչո՞ւ քաղ. ժողովոյ մէջ Եկեղեցական անձինք չեն ընդունուիր: Աշատութիւն խնդրում եմ որ Եկեղեցականք ալ անդամ լինին քաղ. ժողովոյ:

ԱՍԵՆԱՊԵՏ ԷՖ. — Սահմանադրութեան մէջ բացարձակ նշանակուած է որ քաղ. ժողովոյ անդամներն աշխարհականք էլ չլինին, ուստի խնդրեմ, ասանց ուրիշ խնդիր յարուցանելոյ քաղ. ժողովոյ ընտրութեան քուէարկութիւնը կատարենք:

Հարկ կը համարիմ նաև յայտնել ժողովոյ թէ բացակայ երեսփոխաններէն մէկը, որ է Քարակէօղեան կարապետ էֆ. նամակաւ յայտնած է դիւանին, որ իւր քուէթուղթը փակեալ սահարանաւ Խորասանճեան Ալիքսան էֆ. ին հետ զրկած է, թէ որ այսօր քուէարկութիւն պիտի լինի, իւր քուէթուղթն անկէ առնուելով քուէտուղթ ձգուի, թէ ոչ՝ ժողովոյդ կը մնայ որոշել յառաջ քան զքուէարկութիւնն:

ԵՐԵՄԻԱ. ԵՊԻՍԿՈՍՍ. — Թէ որ ընդունուի ուրիշ անդամ հետեոյներ կըլլան:

ԱՍԵՆԱՊԵՏ ԷՖ. — Քանի որ հրատարակուած խնդրոց կարգին մէջ ընտրութեան համար ըլլալիք քուէարկութիւնը ազդարարուած է, ուստի բացակայ երեսփոխանի մը զրկած քուէն կրնայ ժողովը ընդունիլ:

ԽՕՃԱՍՍՐԵԱՆ Օ. ԷՖ. — Ըստ որում ներկայութեան տուժարին մէջ ստորագրութիւն չունի նա, եթէ քուէթուղթը ընդունուի, շիտթութիւն կըլինէ գործողութեան մէջ:

ԱՍԵՆԱՊԵՏ ԷՖ. — Զարմանալի է որ

Օդակն էֆ. ասկէ առաջ այս դրութիւնը կընդունէր, և ևս ալ իրեն համամիտ եղած էի, այն է ընդունիլ բացակայից քուէները, եթէ առաջուց ծանուցեալ է, բայց հիմայ չուզէր ընդունիլ:

ԽՕՃԱՍՍՐԵԱՆ Օ. ԷՖ. — Բացակայից քուէներն ընդունելու մասին ունեցած սկզբունքս փոխած չեմ. միայն թէ պարզ զիտողութիւն մ'էր ըրածս. ըստ որում Քարակէօղեան կ. էֆ. այս օրուան ներկայութեան տուժարին մէջ ստորագրութիւն չունի, չըլլայ որ անոր զրկած քուէթուղթն ընդունուելով շիտթութիւն մը ծագի քուէարկութեան գործողութեան մէջ:

ԱՍԵՆԱՊԵՏ ԷՖ. — Բացակայ երեսփոխանաց քուէներն ընդունելու կամ չընդունելու խնդիրն ասկէ առաջ ալ յուշուած ըլլալով, ժողովը ետքի թողուցած է անոր վիճարանութիւնը. ուստի դիւանը նոյն որոշումն յիշեցընելով կը պարտաւորի չընդունիլ Քարակէօղեան էֆ. ի քուէթուղթը:

Անմիջապէս քուէարկութեան սկսուելով, Դիւանին կողմէն քուէհամարի քննիչ ընտրուեցան երկու Եկեղեցական և երկու Աշխարհական, որք են:

Մատթէոս վարդապետ Իզմիրեան	
Գարեգին	Թաթարեան
Ալիքսան էֆէնտի Խորասանճեան	
Յարութիւն	Զինճիրճեան
Քուէհամարը կատարուելով հետեւեալ արդիւնքն ունեցաւ:	
Թիւ քուէարկուաց 84:	
Բացարձակ առաւելութիւն ստացան:	
Քարակէօղեան կարապետ էֆէնտի քուէ	47
Հալաճեան Բարսեղ	36
Ասրո Սահակ	34
Պոյաճեան Յովհաննէս	34

Հետևապէս մնացեալ 10 անդամոց ընտրութեան համար՝ յաջորդ առաւելագոյն քուէ ստացողներէն կրկնապատիկ թուով հետեւեալ ընտրուեաց ցանկը պատրաստուեցաւ:

Ազարէկեան Սարգիս էֆէնտի քուէ	30
Ղազարսեան Քրիստոստուր	30
Փափաղեան Ստեփան	30
Եուսուֆեան Տիգրան	29
Մանուկեան Սինեքերիմ	28
Մէրեմ—Գուլի Յարութիւն	28

Արճիկեան Յովհաննէս	էֆ.	քուէ	28
Յակոբեան Միքայէլ	"	"	26
Քարակէօղեան Գրիգոր	"	"	25
Օտեան Գրիգոր	"	"	24
Խորասանճեան Ալիքսան	"	"	24
Տատեան Յարութիւն	"	"	22
Քիւրճիպաշեան Բաթոյ	"	"	22
Խանտանեան Յակոբ սէյ	"	"	19
Ստիան փաշա	"	"	18
Խոտիմարաճեան Գէորգ էֆէնտի	"	"	18
Մազսուտեան Սեպուհ	"	"	16
Խոճասարեան Օդակն	"	"	16
Արապեան Սարգիս	"	"	14
Փափաղեան Պետրոս	"	"	14

ԱՍԵՆԱՊԵՏ ԷՖ. — Համեմատական քուէարկութիւնն ու քուէհամարը յատենի ընդէ. ժողովոյ կատարելու հարկ չըկայ, և թէ արդէն օրը ստորագրուեալ ըլլալով ուրիշ օրուան կը մնայ, ուստի կառաջարկեմ որ վերոյիշեալ ցանկին մէջէն քաղ. ժողովոյ 10 անդամոց ընտրութեան համար երեսփոխանք նամակաւ հրաւիրուին յառաջիկայ հինգշաբթի օր ժամը 2 էն մինչ 8, իրենց քուէթուղթերն անձամբ կամ ստորագրեալ նամակաւ զրկել Ղալաթիոյ Եկեղեցւոյն խորհրդարանը, ուր քուէհամարը նոյն օրը կատարուի ՚ի ներկայութեան ընդէ. ժողովոյ դիւանին, և ընդ հսկողութեամբ քննիչ յանձնաժողովոյ մը:

Դիւանին այս առաջարկութիւնը ընդունուելով՝ Քննիչ յանձնաժողովոյ անդամ անուանեցան հետեւեալ 7 անձինք:

Եկեղեցական	
Մատթէոս վարդապետ Իզմիրեան	
Գարեգին	Թաթարեան
Հմայեակ	Ա. յաղմալեան
Աշխարհական	
Ալիքսան էֆէնտի Խորասանճեան	
Միքայէլ	Մամիկոնեան
Յարութիւն	Զինճիրճեան
Ստեփան	Փափաղեան

ԲԱՅՈՒՄ ԵՊԻՍԿՈՍՍԻ ԳՍՏԱՌԱՅԻ ԸՐԱԺԱՐԵԱԼ ԵՐԵՍՓՈՒՍՆՔ:


Դիւանը ներկայութեան տուժարէն ստուգելով որ ասանց ճամբորդութեան և հիւանդութեան պատճառաւ, շարունակ երեք նիստերէ բացակայ գտնուած են հետեւեալ երեք երեսփոխանները:

Աճեմեան Մկրտիչ էֆէնտի
Բէյնիրճեան Գրիգոր
Կիւմրէճեան Գարրիէլ
Ժողովը ըստ օրինի հրատարակ համարեց զանոնք, ասանց զիտողութիւն մը ընելու:
Յաջորդ նիստն 8 օրէն գումարել որոշուելով ասեանը գոյուեցաւ ժամ 10 ին:


ԱՌԺԱՄԱՆԱԿԵԱՅ ԱՍԵՆԱՊԵՏ Ս. Ա.Ղ.Ա.ԲԷ.ԿԵԱՆ Թ. ԿՐՃԻԿԵԱՆ



ԳԻՆ 2 ՂՈՒՐՈՒՇ



ՄԵՓՈՒԿԱՆՈՒԹԻՒՆ ԷՋԳԵՅԻՆ ՄՆՏՐԻՎԻՆ



Կը ծախուի ի Գիւանատան Պատրիարքարանի, և կը գտնուի
Եկեղեցեաց բանկալները :